ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.05.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲԽ-ԱՄ-2018/52

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, քննելով «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի կողմից 09.04.2018թ. ներկայացված բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-ԱՄ-2018/52 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. **«Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 09.04.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կարիքների համար ՀՀ գյուղատնտեսության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-18/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Հերմինե

Ֆարմեց» ՍՊԸ-ն և «Կենդանիների առողջության պահպանման դաշնային կենտրոն» ՖՊԲԿ-ն:

Ընկերությունը ներկայացված բողոքով հայտնել է, որ Պատվիրատուի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված պահանջը, քանի որ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը՝ 16 911 229.17 ՀՀ դրամ, ավելի ցածր է քան «Կենդանիների առողջության պահպանման դաշնային կենտրոն» ՖՊԲԿ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը, սակայն առաջին տեղը զբաղեցրած մասնակից, այնուհետև ընտրված մասնակից է ճանաչվել «Կենդանիների առողջության պահպանման դաշնային կենտրոն» ՖՊԲԿ-ն:

Ընկերությունը ներկայացված բողոքով խնդրել է՝

1. Արգելել Պատվիրատուին 5-րդ չափաբաժնի մասով կնքել պայմանագիր «Կենդանիների առողջության պահպանման դաշնային կենտրոն» ՖՊԲԿ-ի հետ:

2. Պարտավորեցնել Պատվիրատուին առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ին կամ չկայացած հայտարարել գնման գործընթացը 5-րդ չափաբաժնի մասով:

«Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 13.04.2018թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը, ավելացնելով, որ ոչ ռեզիդենտ մասնակից հանդիսացող «Կենդանիների առողջության պահպանման դաշնային կենտրոն» ՖՊԲԿ-ի կողմից հայտով ներկայացված 17 494 375 ՀՀ դրամ գումարը վերջնական չէ և այդ գումարից բացի առաջանալու են լրացուցիչ ծախսեր, հարկեր, ածանցյալ գումարներ, որոնք պետք է վճարի ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը կամ եթե ոչ վերջինս ապա ելնելով այլ իրավական ակտերից մեկ այլ կառույց պետք է վճարի այդ պարտավորությունից առաջացած լրացուցիչ ծախսերը, հարկերը, տուրքերը և ածանցյալ գումարները, քանի որ ապրանքի մատակարարման վայրը համարվում է Հայաստանի Հանրապետության տարածքը, որն էլ ենթադրում է, որ տվյալ գործարքը ԱԱՀ-ով հարկման օբյեկտ է:

Վերոգրյալով պայմանավորված, Ընկերությունը 20.04.2018թ. թիվ 2009/1 գրությամբ խնդրել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ ապացույցներ ներկայացնելու համար լրացուցիչ ժամկետ տրամադրել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 02.05.2018թ. միջանկյալ որոշմամբ բավարարվել է Ընկերության միջնորդությունը և բողոքի քննության ժամկետը երկարաձգվել է 10 օրացույցային օրով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ Ընկերության կողմից որևէ ապացույց չի ներկայացվել:

2. **<u>ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը գրությամբ հայտնել է, որ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի կողմից 09.04.2018թ. ներկայացված բողոքը, առ այն, որ «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-18/9» ծածկագրով գնման ընթացակարգի ամենացածր գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն է և Պատվիրատուն խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով նախատեսված պահանջները, ինչի արդյունքում բողոքաբերը հայտարարվել է 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից, ամբողջությամբ անհիմն է հետևյալ պատճառաբանություններով.

«Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկը բաղկացած է արժեքից՝ 16 911 229.17 ՀՀ դրամ և ԱԱՀ-ից՝ 3 382 245.83 ՀՀ դրամ, որոնց ընդհանուր գումարը կազմում է 20 293 475 ՀՀ դրամ, որը գերազանցում է ՀՀ կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի «ՀՀ 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1717-Ն որոշման անվանացանկում հաստատված 33651257-8 կոդով անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի գումարը՝ 17 494 375 ՀՀ դրամ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

Այսպիսով«Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է բյուջեով հատկացված ֆինանսական միջոցները:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի, պատվիրատուի և մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բացառությամբ՝

1) երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ կամ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում, կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները: Սույն կետի համաձայն վարվող

բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը կամ վճարման պայմանների փոփոխությանը, իսկ բանակցությունները վարվում են միաժամանակյա՝ բոլոր մասնակիցների հետ:

Օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերի համաձայն՝

7. Պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

8. Գնումներ կատարելու համար ֆինանսական միջոցներ նախատեսվում են բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման համար սահմանված համապատասխան հոդվածներով: Արգելվում է ֆինանսական միջոցներ նախատեսել բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման այլ հոդվածներով, եթե այդ միջոցների հաշվին պետք է կատարվեն գնումներ»:

Ամփոփելով վերոգրյալը, Պատվիրատուն խնդրել է մերժել «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը՝ անհիմն լինելու պատճառով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 13.04.2018թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

<u>3. ԳԲԽ-ԱՄ-2018/52 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-ԱՄ-2018/52 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ՀՀ գյուղատնտեսության նախարարության կարիքների համար պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-18/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտեր են ներկայացրել «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն և «Կենդանիների առողջության պահպանման դաշնային կենտրոն» ՖՊԲԿ-ն:

2. Ըստ Պատվիրատուի 2018թ. գնումների պլանի անվանացանկում հաստատված 33651257-8 կոդով անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի գումարը կազմում է 17 494 400 ՀՀ դրամ:

3. «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)՝ 16 911 229.17 ՀՀ դրամ և ԱԱՀ՝ 3 382 245.83 ՀՀ դրամ, բաղադրիչներից բաղկացած գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 20 293 475 ՀՀ դրամ:

4. «Կենդանիների առողջության պահպանման դաշնային կենտրոն» ՖՊԲԿ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)՝ 17 494 375 ՀՀ դրամ, ԱԱՀ-ի սյունակը չի լրացվել, բաղադրիչներից բաղկացած գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 17 494 375 ՀՀ դրամ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.03.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի 5-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Կենդանիների առողջության պահպանման դաշնային կենտրոն» ՖՊԲԿ-ն:

6. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության համաձայն՝ Ընթացակարգի թիվ 5-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից է ճանաչվել «Կենդանիների առողջության պահպանման դաշնային կենտրոն» ՖՊԲԿ-ն:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միհր Անանյանս, ուսումնասիրելով «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի 09.04.2018թ. բողոքը, ՀՀ գյուղատնտեսության նախարարության 12.04.2018թ. գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է, իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Կարգի 32-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը՝

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից ՀՀ գյուղատնտեսության նախարարության կարիքների համար պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԳՆ-ԳՀԱՊՁԲ-18/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ըստ Պատվիրատուի 2018թ. գնումների պլանի՝ անվանացանկում հաստատված 33651257-8 կոդով անասնաբուժության մեջ կիրառվող պատվաստանյութերի գումարը կազմում է 17 494 400 ՀՀ դրամ:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)՝ 16 911 229.17 ՀՀ դրամ և ԱԱՀ՝ 3 382 245.83 ՀՀ դրամ, բաղադրիչներից բաղկացած գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 20 293 475 ՀՀ դրամ:

«Կենդանիների առողջության պահպանման դաշնային կենտրոն» ՖՊԲԿ-ն հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)՝ 17 494 375 ՀՀ դրամ, որի ընդհանուր գինը կազմել է 17 494 375 ՀՀ դրամ: «Կենդանիների առողջության պահպանման դաշնային կենտրոն» ՖՊԲԿ-ն գնային առաջարկի մեջ առանձին տողով չի նախատեսել պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 22.03.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի թիվ 5-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Կենդանիների առողջության պահպանման դաշնային կենտրոն» ՖՊԲԿ-ն, որից հետո Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության համաձայն՝ վերջինս ճանաչվել է ընտրված մասնակից:

«Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով հայտնել է, որ Պատվիրատուի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված պահանջը, քանի որ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը՝ 16 911 229.17 ՀՀ դրամ, ավելի ցածր է քան «Կենդանիների առողջության պահպանման դաշնային կենտրոն» ՖՊԲԿ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը՝ 17 494 375 ՀՀ դրամը, սակայն առաջին տեղը

զբաղեցրած մասնակից, այնուհետև ընտրված մասնակից է ճանաչվել «Կենդանիների առողջության պահպանման դաշնային կենտրոն» ՖՊԲԿ-ն:

Պատվիրատուն ԳԲԽ-ԱՄ-2018/52 բողոքով տեղի ունեցած նիստի ժամանակ հայտնել է, որ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը, որի ընդհանուր գումարը կազմում է 20 293 475 ՀՀ դրամ, գերազանցում է տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Կարգի 32-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գնով:***

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ ***հայտերի բացման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված <u>նվազագույն գների հավասարության դեպքում</u> <u>կամ եթե</u> ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած <u>բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների գնման հայտով սահմանված գինը</u>՝***

ա. առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

Այսպիսով, վերոգրյալով պայմանավորված արձանագրում եմ, որ, հաշվի առնելով այն փաստը, որ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը, որը կազմում է 20 293 475 ՀՀ դրամ գերազանցում է տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքի համար նախատեսված ֆինանսական միջոցները՝ 17 494 400 ՀՀ դրամը, ուստի գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նման պայմաններում «Կենդանիների առողջության պահպանման դաշնային կենտրոն» ՖՊԲԿ-ի հայտը գնահատելով բավարար գործել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանմամբ, քանի որ նման պայմաններում չի գործում Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված պահանջը:

Ինչ վերաբերվում է «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված այն պնդմանը, որ «Կենդանիների առողջության պահպանման դաշնային կենտրոն» ՖՊԲԿ-ի կողմից հայտով ներկայացված 17 494 375 ՀՀ դրամ գումարը վերջնական չէ և այդ գումարից բացի առաջանալու են լրացուցիչ ծախսեր, հարկեր, ածանցյալ գումարներ, որի վերաբերյալ ապացույցներ ներկայացնելու համար վերջինս միջնորդել էր ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ լրացուցիչ ժամկետ տրամադրել, ապա սույն մասով արձանագրում եմ, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ Ընկերության կողմից որևէ ապացույց չի ներկայացվել:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Հերմինե Ֆարմեց» ՍՊԸ-ի կողմից 09.04.2018թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ